

**ԹՈՒՐՔ-ՀԱՅԿԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ
ԹՈՒՐՔԻԱՅԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՆԹԱԽՈՐՔՈՒՄ
(ՄԻՆՉԵՒ 2008 ՕԳՈՍՏՈՍԻ ՌՈՒՍ-ՎՐԱՑԱԿԱՆ
«ՀՆԳՕՐԵԱՅ ՊԱՏԵՐԱԶՄ»Ը)**

ԳՐԻԳՈՐ ԱՐՇԱԿԵԱՆ
garshakyan@mail.ru

ՄՈՒՏՔ

Յօդուածում վերլուծում են Արդարութիւն եւ Զարգացում Կուսակցութեան (ԱԶԿ) իշխանութեան գալուց յետոյ (2002) Թուրքիայի արտաքին քաղաքականութեան մէջ տեղի ունեցած փոփոխութիւնները, մասնաւորապէս՝ ՀՀի հետ յարաբերութիւններում: Քննարկում են ԱՄՆ Պետական Քարտուղարութեան անմիջական աջակցութեամբ ստեղծուած Հայ-Թուրքական Հաշտեցման Յանձնաժողովի (ՀԹՀՅ) գործունէութեան հիմնական երեսակները, երկկողմ յարաբերութիւնների հիմնական մարտահրաւերները, դրանց բարելաման ուղղութիւնների մշակումը: Ներկայացւում են Թուրքիայի իշխանութիւնների կողմից Հայոց Յեղասպանութեան փաստը ժխտող քաղաքականութեան կարեւորագոյն նախադրեալները, այդ քաղաքականութեան առաջնղման նոր, թարմ մօտեցումները եւ այս ուղղութեամբ իրականացուած քայլերը: Արծարծւում են Թուրքիայի սեփական պատմութեան հետ աւելի անկեղծ առերեսուելու, Հայոց Յեղասպանութեան փաստը հրապարակային հարթակներում քննարկելու իրողութիւնը, իշխանութեան տեսակէտներից տարբերուող հայեացքները, Հրանդ Տինքի սպանութիւնը եւ դրան յաջորդած հասարակական բուռն քննարկումների ազդեցութիւնը այս զարգացումների վրայ:

Հանգամանօրէն դիտարկւում են Թուրքիայի կողմից առաջ քաշուած այսպէս կոչուած, «պատմաբանների յանձնաժողովի հարցը»:

**Ա. ԱԶԿ-Ի ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ԳԱԼԸ ԵՒ ԹՈՒՐՔԻԱՅԻ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՀԵՏ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՄ**

2002 Նոյեմբերին Թուրքիայում տեղի ունեցած խորհրդարանական ընտրութիւնների արդիւնքում իսլամամէտ

ԱԶԿն ստացաւ ընտրողների ծայների գերակշռող մեծամասնութիւնը: Գալով իշխանութեան՝ ԱԶԿն Թուրքիայի ներքին եւ արտաքին քաղաքականութեան մէջ իրականացրեց էական փոփոխութիւններ: Մասնաւորապէս, արտաքին քաղաքականութեան մէջ ներդրուեց հարեան տարածաշրջաններում եւ Հարաւային Կովկասում տարածաշրջանային առաջատար դառնալու նպատակը¹:

Որոշակի դրական տեղաշարժեր նկատուեցին հայ-թուրքական յարաբերութիւնների մէջ: Թուրք պաշտօնեաները սկսեցին խօսել Ռուսաստանի, Իրանի եւ յատկապէս Հայաստանի հետ յարաբերութիւններում հնարաւոր զարգացումների մասին: Ենթադրում էր, որ Թուրքիայի, Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ գոյութիւն ունեցող սահմանային դարպասների եւ հաղորդակցային ուղիների բացումը կարող է աջակցել տարածաշրջանի թոյլ տնտեսութիւններին, խաղաղութեանն ու կայունութեանը: Թուրքիայի ԱԳ նախարար Եաշար Եաքըշը յայտարարեց. *«Մենք կը զարգացնենք յարաբերութիւնները Ռուսաստանի, Իրանի եւ Հայաստանի հետ: Մենք հաշուի կ'առնենք Ադրբեջանի մտահոգութիւնները, երբ յարաբերութիւններ հաստատենք Հայաստանի հետ, բայց եթէ մեր տնտեսական շահերը պահանջեն յարաբերութիւններ հաստատել Հայաստանի հետ մենք պէտք է դա անենք»*²:

Յատկանշական է, որ 2003 Յունուարի 7-8ը երկօրեայ այցով Ադրբեջանում գտնուող Թուրքիայի ԱԶԿ ղեկավար Ռեջէփ Թայիփ Էրդողանը, անդրադառնալով հայ-թուրքական յարաբերութիւններին, նշեց. *«Թուրքն ու ադրբեջանցիները եղբայրներ են, բայց ռազմավարական շահերը աւելի վեր են դասուում»*³: Այսպիսով, Էրդողանը խուսափեց հակահայկական սուր արտայայտութիւններ անելուց՝ սահմանափակուելով հաճոյախօսութիւններով, խօսելով երկու ազգերի եղբայրութեան մասին⁴: Այս այցելութեամբ Թուրքիայի իշխանութիւնները եւս մէկ անգամ ընդգծեցին հայ-թուրքական յարաբերութիւնների նկատմամբ Թուրքիայի նոր վերաբերմունքը:

ՀՀի հանդէպ Թուրքիայի վերաբերմունքի նման փոփոխութիւնը մեծ դժգոհութիւն առաջացրեց Ադրբեջանի ինչպէս քաղաքական, այնպէս էլ հասարակական շրջանակներում: Այս կապակցութեամբ Դեկտեմբերի 25ին Ադրբեջանի նախագահ Հէյդար Ալիեւը

ընդունեց Ադրբեջանում Թուրքիայի դեսպան Ահմեդ Ունալ Չելիքոզին: Հանդիպման ընթացքում դեսպանը նշեց, որ ճիշտ չեն եղել այն յայտարարությունները թէ թուրք պաշտոնեաները հակուած են համագործակցութեան Հայաստանի հետ: Իր հերթին Ալիեւը վստահութիւն յայտնեց, որ Թուրքիան չի փոխի իր նախկին քաղաքականութիւնը Հայաստանի հետ, եւ յոյս յայտնեց, որ այսուհետ եւս Թուրքիան կը շարունակի աջակցութիւն ցուցաբերել Ադրբեջանին՝ ԼՂ հիմնահարցի կարգաւորման գործընթացում⁵:

Վերոյիշեալ լարուածութիւնը մեղմելու նպատակով՝ հայ-թուրքական եւ թուրք-ադրբեջանական յարաբերութիւններին անդրադարձան Թուրքիայի ԱԳ նախարար Եաքըշը եւ ԱԶԿ ղեկավար Էրդողանը: 2003 Յունուարին Եաքըշը Բաքուի 525 թերթին տուած հարցազրոյցում յայտարարեց. «*Թուրքիայի քաղաքականութիւնը Հայաստանի նկատմամբ չի փոխուի: Թուրքիան ձգտում է բնականոն յարաբերութիւններ ունենալ իր բոլոր հարեւանների հետ, սակայն չի պատրաստուում ընդարձակել իր յարաբերութիւնները Հայաստանի հետ: Թուրքիան կը բացի հայկական սահմանը միայն եթէ ստանայ Ադրբեջանի համաձայնութիւնը*»⁶: Իսկ Էրդողանը յայտարարեց, որ որեւէ մօտալուտ փոփոխութիւն արատքին քաղաքականութեան մէջ չկայ. «*Անկարան երբեք չի ձեռնարկի քայլեր ընդդէմ Ադրբեջանի ժողովրդի կամքին: Այս պարագայում Թուրքիան կը շարունակի իր քաղաքականութիւնը Հայաստանի նկատմամբ եւ կ'աջակցի Ադրբեջանի ժողովրդին*»⁷:

Իրադարձութիւնների նման զարգացումները անհանգստութիւն առաջացրեցին ՀՀ-ում: 2003 Յունուարի 10ին Հայաստանի ԱԳ նախարար Վարդան Օսկանեանը Երեւանում հանդէս եկաւ յայտարարութեամբ. «*Հայաստանի նկատմամբ արուած կոշտ յայտարարութիւնները, որոնք արուել են վերջերս Թուրքիայի բարձրաստիճան պաշտօնեաների կողմից, ստուեր են գցում մեր երկկողմանի յարաբերութիւնների հետ կապուած յոյսերի վրայ, որոնք ի յայտ էին եկել ԱԶԿի ղեկավարների կողմից արուած բաւականին խելացի յայտարարութիւններից յետոյ, որոնք արուեցին, երբ կուսակցութիւնը յաղթանակ տարաւ Թուրքիայի պառլամենտական ընտրութիւններում: Մենք պատրաստ ենք դիւանագիտական յարաբերութիւններ հաստատել Թուրքիայի հետ ցանկացած պահի եւ առանց որեւէ նախապայմանի: Ես կոչ եմ*

անում Թուրքիային հետևելու մեր օրինակին եւ չկրկնել իրենց նախորդների սխալները»⁸:

Յատկանշական է, որ չնայած հայ-թուրքական յարաբերությունների փաստացի բացակայութեանը Թուրքիայի նախագահ Ահմէդ Նեջդէթ Սեզէրը 2003 Մարտի 21ին շնորհաւորական ուղերձ յղեց Հայաստանի Հանրապետութեան նախագահ Ռոբերտ Քոչարեանին իր պաշտօնում վերընտրուելու առթիւ: Ուղերձում մասնաւորապէս ասուած էր. «Լիայոյս եմ, որ Ձեր պաշտօնավարութեան երկրորդ ժամկէտի ընթացքում մեր տարածաշրջանը՝ Ձեր մասնակցութեամբ, կը կարողանայ հաստատուն քայլեր անել դէպի տեւական խաղաղութիւն, կայունութիւն եւ համագործակցութիւն»⁹:

Սեզէրի շնորհաւորական ուղերձը դժգոհութեան ալիք բարձրացրեց Ադրբեջանում: Անհանգստութիւն առաջացաւ, որ այդ ուղերձը կարող է նշանակել Թուրքիայի կողմից Հայաստանի հանդէպ վարուող քաղաքականութեան որոշակի փոփոխութիւն եւ երկկողմանի յարաբերութիւններում առկայ լարուածութեան մեղմացում: Դարձեալ դեսպան Չելիքօզը հանդէս եկաւ՝ Սեզէրի կողմից Քոչարեանին ուղղուած շնորհաւորանքը անուանելով սովորական դիւանագիտական արարողակարգ. «Չնայած դիւանագիտական յարաբերութիւններ չկան Անկարայի եւ Երեւանի միջեւ, Թուրքիան ճանաչել է Հայաստանը որպէս անկախ պետութիւն: Անկարան հրաժարուում է հաստատել դիւանագիտական յարաբերութիւններ Երեւանի հետ, քանի դեռ Հայաստանը չի ազատում գրաւուած ադրբեջանական հողերը»¹⁰: Այսպիսով, Թուրքիան մէկ անգամ եւս հաստատեց, որ Հայաստանի նկատմամբ Անկարայի դիրքորոշումը մնում է անփոփոխ:

Վերոյիշեալ ուղերձը մեկնաբանեց նաեւ Թուրքիայի խորհրդարանի պատգամաւոր, ԱԶԿ անդամ Իլիաս Չաքիրը: Համաձայնուելով Չելիքօզի հետ՝ նա յայտարարեց. «Թուրքիայի դիրքորոշումը հայ-ադրբեջանական հակամարտութեան նկատմամբ չի փոփոխուել եւ Սեզէրի շնորհաւորական նամակը չպէտք է գործադրի բացասական ազդեցութիւն Անկարայի եւ Բաքուի միջեւ եղած յարաբերութիւնների վրայ»¹¹:

Չնայած հայ-թուրքական դիւանագիտական յարաբերութիւնների բացակայութեանը, ՀՀի եւ Թուրքիայի արտաքին գործերի

նախարարների հանդիպումները տարբեր միջազգային ձեռագրերի շրջանակներում շարունակուցին նաև ԱԶԿ իշխանության գալուց յետոյ, ընդ որում, դրանք 2002-2005ին որոշակիորեն աշխուժացան՝ իրաքանչիւր դէպքում լուծելով աւելի շուտ որոշակի դիւանագիտական խնդիրներ: Մասնաւորապէս, 2003 Յունիսի 3ին Մադրիդում ՆԱՏՕի արտաքին գործերի նախարարների գագաթաժողովում Թուրքիայի արտգործնախարար Աբդուլլահ Գիւլը, սեփական նախաձեռնութեամբ հանդիպելով Հայաստանի արտգործնախարար Օսկանեանին, յայտարարեց, որ հայ-թուրքական յարաբերութիւնները պէտք չէ կապել Ադրբեջանի հետ եւ որ լուծելով երկկողմ խնդիրները՝ դրանով կը նպաստեն դարաբաղեան խնդրի լուծմանը: Յատկանշական է, որ Թուրքիայի եւ ՀՀի արտգործնախարարների հանդիպմանը յաջորդեց նոյն ամսին թուրքական զօրքերի մասնակցութիւնը Հայաստանում ՆԱՏՕի կողմից անցկացուած զօրավարժութեանը, ինչը մեծ դժգոհութիւն առաջացրեց հայ հասարակական լայն շրջանակներում¹²:

Օսկանեան-Գիւլ երկրորդ հանդիպումը տեղի ունեցաւ 2003 Սեպտեմբերի 25ին ՄԱԿի Ընդհանուր ժողովի շրջանակներում: Օսկանեանի գնահատմամբ՝ այն մի քայլ ետ էր նախորդից: Գիւլը պնդել էր, որ Լեռնային Ղարաբաղի հարցն անպայման ներառուի քննարկումների օրակարգում, ինչին Օսկանեանը պատասխանել էր, որ խնդիր չի տեսնում այնքան ժամանակ, քանի դեռ հայ-թուրքական յարաբերութիւնները չեն կապում ԼՂ հակամարտութեան կարգաւորման հարցին: Կողմերը պայմանաւորուել էին, որ յաջորդ հանդիպմանը կողմերը կը ներկայանան ցուցակներով, որտեղ կը ներկայացուեն երկու երկրների կողմից ձեռնարկուելիք փոքր քայլերը, կը գտնուեն ընդհանուր հետաքրքրութիւններ եւ կը պարզեն, թէ որտեղից կարելի է սկսել փոքր քայլերի իրականացումը:

Երրորդ հանդիպումը տեղի ունեցաւ 2003 Դեկտեմբերի 5ին Բրիւսէլում, որտեղ հայկական կողմը ներկայացրեց խոստացած տասը կէտից բաղկացած ցուցակը, իսկ թուրքական կողմը որեւէ ցուցակ չներկայացրեց: Այդուհանդերձ, Գիւլը նշեց, որ հայկական ցուցակի առնուազն առաջին միքանի կէտերի իրականացման հարցում որեւէ խնդիր չի տեսնում¹³:

2003 Դեկտեմբերին Ալիեի մահուանից յետոյ նոր նախագահ ընտրուեց նրա որդի Իլիամ Ալիեւը: Ադրբեջանի նոր իշխանութիւնների հետ համագործակցելու եւ թուրք-ադրբեջանական յարաբերութիւնները զարգացնելու նպատակով 2003 Դեկտեմբերի 12ին Անկարայում համագումար կազմակերպուեց՝ «Թուրքիայի եւ Ադրբեջանի Ռազմավարական Յարաբերութիւնների Ներկան եւ Ապագան» խորագրով: Համագումարին ելոյթ ունեցաւ Թուրքիայի պետնախարար Մեհմէդ Ալիիւնը: Նա մասնաւորապէս նշեց. *«հաճելի է, որ երկու երկրները ցանկութիւն ունեն նպաստելու երկկողմ յարաբերութիւնների բարելաման, ունեն միանման պարկերացումներ ապագայի վերաբերեալ: Բոլոր կարծրացած հիմնահարցերի լուծումը տարածաշրջանում եւ, մասնաւորապէս, Ղարաբաղեան հիմնահարցի լուծումը շահեկան կը լինի ամբողջ տարածաշրջանի համար եւ կը նպաստի տնտեսութեան եւ քաղաքականութեան բարելամանը»*¹⁴:

Համագումարում ելոյթ ունեցաւ նաեւ Թուրքիայի ուժանիւթի եւ բնական պաշարների նախարար Հիւմի Գիւլէրը: Նա նշեց, որ գոյութիւն ունեն երկու կարեւոր նախադէպ՝ Բաքու-Թբիլիսի-Ջէյհան եւ Բաքու-Թբիլիսի-Էրզրում ծրագրեր: Ըստ նրա՝ այս նախագծերում չի լինի որեւէ յետաձգում, Բաքու-Թբիլիսի-Ջէյհան նախագիծը կ'աւարտուի 2005ին, իսկ Բաքու-Թբիլիսի-Էրզրումը՝ 2006ին, ինչպէս պլանաւորուել էր¹⁵:

2004 Յունուարի վերջին ԱՄՆ կատարած պաշտօնական այցի ընթացքում վարչապետ Էրդողանը նշեց. *«Հնարաւոր է, որ թուրքական կառավարութիւնը Հայաստանի հետ սահմանի բացման որոշում կայացնի, եթէ Թուրքիայի բարեկամական նախաձեռնութիւնը փոխադարձ արձագանգներ գտնի: Հայաստանի հարեւանութեամբ ապրող Թուրքիայի քաղաքացիները ցանկանում են սահմանները բաց տեսնել, որպէսզի կարողանան հանգիստ առելուր անել Հայաստանի հետ»*¹⁶:

Այնուամենայնիւ, Թուրքիան շարունակում էր հայ-թուրքական յարաբերութիւնների կարգաւորումը պայմանաւորել ԼՂ հակամարտութեան կարգաւորմամբ: Մասնաւորապէս, 2004 Ապրիլի 15ին ԱԳ նախարար Գիւլը Ադրբեջան կատարած այցի ընթացքում՝ հերքելով այն լուրերը, թէ իբր Եւրամիութիւնը ճնշում է

գործադրում Թուրքիայի վրայ հայ-թուրքական սահմանի բացման համար, յայտարարեց. «Հայ-թուրքական սահմանը կը մնայ փակ, քանի դեռ ԼՂ հիմնահարցի վերաբերեալ բանակցութիւններում չկայ առաջընթաց»¹⁷:

Այսպիսով, Թուրքիան շարունակեց բազմակողմանի աջակցութիւնը Ադրբեջանին՝ մշտապէս խորացնելով իր յարաբերութիւնները այդ երկրի հետ եւ պաշտպանելով նրա շահերը միջազգային ասպարէզում: Հայ-թուրքական յարաբերութիւնների վրայ ազդելու առումով այս հանգամանքը հանդիսացաւ կարեւոր գործոն, քանի որ պաշտօնական Անկարան շարունակեց հայ-թուրքական յարաբերութիւնների կարգաւորումը կապել հայ-ադրբեջանական յարաբերութիւններով:

Բ. ՀԱՅ-ԹՈՒՐԹԱԿԱՆ ՀԱՇՏԵՑՄԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ ՈՐՊԷՍ ԵՐԿԿՈՂՄ
ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱԽՈՐՄԱՆ ՆՈՐ ՓՈՐՁ

Հայ-թուրքական յարաբերութիւնների կարգաւորման գործում մեծ շահագրգռութիւն էր ցուցաբերում ԱՄՆի կառավարութիւնը: Այդ նպատակով ԱՄՆի պետքարտուղարութեան անմիջական աջակցութեամբ ստեղծուեց Հայ-Թուրքական Հաշտեցման Յանձնաժողովը (ՀԹՀՅ), որի շուրջ բազմաթիւ մեկնաբանութիւններ եղան թէ՛ Թուրքիայում, թէ՛ Հայաստանում:

2001 Յուլիսի 9ին Վիեննայում ստեղծուած ՀԹՀՅի նպատակներն էին հռչակուել՝ հայ-թուրքական յարաբերութիւնների քննարկումը եւ դրանց բարելաւման ուղղութիւնների մշակումը: Այն կազմուած էր վեց թուրք եւ չորս հայ անդամներից.- Գիւնդուզ Աքթան (թուրք նախկին դիւանագէտ), Վամիկ Վոլքան (հոգեբան Վիրջինիայի Համալսարան), Ուսթուն Էրգուդէր (Բողագիջի Համալսարանի նախկին նախագահ), Սադի Էրգուվենջ (Թուրքիայի պաշտօնաթող զօրավար), Օզդան Սանքերք (Թուրքիայի Հանրապետութեան նախկին ԱԳ փոխնախարար), Իլթէր Թուրքմէն (Թուրքիայի հանրապետութեան նախկին ԱԳ նախարար), եւ Վան Գրիգորեանը (Ամերիկայի Հայկական Համագումարի տնօրէնների խորհրդի նախագահ), Ալեքսանդր Արզումանեանը (Հայաստանի նախկին ԱԳ նախարար), Անդրանիկ Միհրանեանը (Ռուսաստանում յայտնի քաղաքական վերլուծաբան, նախկինում նախագահ Ելցինի խորհրդական) եւ Դաւիթ Յովհաննիսեանը

(Սիրիայում Հայաստանի նախկին դեսպան, յատուկ յանձնարարութիւններով դեսպան)¹⁸:

Յանձնաժողովի թուրք անդամների ընտրութիւնը կատարուել էր թուրքական կառավարութեան օգնութեամբ: Որպէսզի պահպանուի յանձնաժողովի ոչ-պաշտօնական բնոյթը՝ ընտրուել էին նախկին պետական պաշտօնեաներ եւ յայտնի հասարակական գործիչներ: Յանձնաժողովի կազմում պետական նախկին պաշտօնեաների եւ Հայոց Յեղասպանութեան ճանաչման դէմ իրենց գործնէութեամբ յայտնի պատմաբանների ընտրութիւնը ցոյց էր տալու, որ թուրքական կողմը մի կողմից պաշտպանելու էր պաշտօնական Անկարայի դիրքորոշումն այս հարցում, միւս կողմից՝ ցեղասպանութեան հարցում զիջումներ չէին լինելու: Յանձնաժողովի հայ անդամները չէին ներկայացնում ողջ հայկական քաղաքական դաշտը: Եւ թերեւս սա այդ նախաձեռնութեան ամենաթոյլ կողմերից էր:

ԱՄՆ պետքարտուղարութիւնը այդ գործը յանձնարարեց խորհրդատու, ժողովրդական դիւանագիտութեան փորձագէտ Դէյվիդ Ֆիլիպսին, որը գործունէութիւն էր ծաւալել Կիպրոսի յունական եւ թուրքական համայնքների միջեւ երկխօսութեան զարգացման, ինչպէս նաեւ Յունաստան-Թուրքիա երկխօսութեան ծաւալման ոլորտներում: ՀԹՀՅի ստեղծման գաղափարն ընդունուել էր մի ժամանակաշրջանում, երբ միջազգային հանրութեան, տարբեր երկրների քաղաքական, հասարակական եւ գիտական շրջանակների հետաքրքրութիւնը Հայոց Յեղասպանութեան ճանաչման հիմնախնդրի վերաբերեալ բաւական մեծացել էր:

Մեր կարծիքով, այս պայմաններում հայ-թուրքական հասարակական երկխօսութեան առաջնորումը գնահատում էր որպէս օգտակար երեւոյթ, որովհետեւ, մի կողմից, ցոյց էր տալիս, որ ԱՄՆը եւ նրա դաշնակիցները կողմ են հայ-թուրքական երկխօսութեան միջոցով Հայոց Յեղասպանութեանն առնչուող խնդիրների շուրջ փոխադարձաբար ընդունելի լուծում գտնելուն, միւս կողմից՝ այդ երկխօսութեան ծաւալումն արդարացնում էր գործադիր իշխանութիւնների կեցուածքը՝ չկատարելու պաշտօնական քայլեր, որոնք կը հակասէին ԱՄՆ դաշնակից Թուրքիայի արմատական շահերին: Միւս կողմից՝ Թուրքիայի հասարակութեան ներսում աննախադէպ մեծացած

հետաքրքրությունը պատմական անցեալի նկատմամբ, ինչն, ինչպես պարզուեց, լուրթեան էր մատնուել եւ նենգափոխուել նախորդ շատ տասնամեակների ընթացքում, յանգեցրեց մի մթնոլորտի, երբ քաղաքական իշխանութիւնները պարտաւոր էին որոշակի քայլերի դիմել խնդրի միջազգայնացման մթնոլորտում Թուրքիայի կողմից համարժէք արձագանգների համար:

Այս ենթախորքում ուշագրաւ էին Ֆիլիպսի դիտարկումները Թուրքիայում տիրող հասարակական մտայնութիւնների վերաբեալ. «Ինչու՞ է Թուրքիան այդպէս ցաւագին արձագանգում ցեղասպանութեան միջազգային ճանաչմանը: Թուրքերը հրաժարուում են ճանաչել ցեղասպանութիւնը, որովհետեւ ճանաչումը հակասում է իրենց ազնիւ կերպարի մասին սեփական ընկալմանը: Վիրաւորական է դադուել միջազգային հանրային կարծիքի դադարանում այն իրադարձութիւնների համար, որոնք տեղի են ունեցել անգամ Թուրքիայի Հանրապետութեան ստեղծումից առաջ: Միաժամանակ, Թուրքիայի կառավարութիւնը վախենում է, որ արշաւը փոխհատուցման կամ փարաժքային պահանջների իրաւական հիմք է ստեղծում: Անկարան նաեւ անհանգստանում է, որ Հայաստանը ցանկանում է ետ ստանալ նախնիների փարաժքները, օրինակ՝ Արարատ Լեռը: Թուրք ազգայնականները դեռ համոզուած են, որ երկիրը շրջապատուած է թշնամական ուժերով, որոնք փորձում են այն ոչնչացնել»¹⁹:

Հայաստանում քաղաքական տարբեր ուժերի վերաբերմունքը՝ ՀԹՀՅին, պայմանաւորուած էր հիմնականում Հայոց Ցեղասպանութեան ճանաչման գործընթացին այդ կառոյցի հնարաւոր խոչընդոտներով, եւ՝ որ հայկական կողմից ներկայացուած չեն հասարակական իրական կշիռ ու ազդեցութիւն ունեցող ուժերը, ինչպէս նաեւ միջպետական երկխօսութեանը փոխարինելու դրա փորձերով:

Ըստ Ֆիլիպսի, ՀԹՀՅն.-

- հաստատեց կառուցողական երկխօսութիւն եւ բացեց դռները քաղաքացիական հասարակութեան հայ եւ թուրք ներկայացուցիչների համար,

- խթանեց դիւանագիտական կապը թուրք եւ հայ պաշտօնեաների միջեւ,

- (ցեղասպանության հարցի լուծման նկատառումներով) իր գործունեությամբ սկիզբ դրեց Անցումային Արդարադատության Միջազգային Կենտրոնի (ԱԱՄԿ) հետ աշխատանքներին,

- առաջադրեց սահմանների բացման սկզբունքային եւ պայմանագրային հիմքեր կրող մօտեցումներ: Չնայած առաջընթացին՝ յարաբերությունները Թուրքիայի եւ Հայաստանի, ինչպես նաեւ Ադրբեջանի եւ Հայաստանի միջեւ մնում են անկայուն: Տարակարծությունները հեշտությամբ կարող են ապահովել զարգացումների ետընթաց, կամ նպաստել բռնության ելք թելադրող իրադարձությունների²⁰:

Հասկանալու համար հայ-թուրքական երկխոսության յետագայ զարգացման տրամաբանությունը, կարելի է համեմատել ՀԹՀՅԻ գործունեության արդիւնքում ձեւակերպուած հայ-թուրքական յարաբերությունների յանձնարարականները՝ համապատասխան կառավարություններին, որոնք մշակուել են 2004 Ապրիլի 14ին: Այդ յանձնարարականները հետեւեալն էին.

- պաշտօնական շփումները պէտք է զարգանան,
- հայ-թուրքական սահմանի բացումը պէտք է յայտարարուի եւ իրականացուի 2004ին,
- երկու երկրները պէտք է պետական մակարդակով աջակցեն քաղաքացիական հասարակության կրթութանը, գիտութանը, մշակոյթին եւ զբօսաշրջութանն ուղղուած ծրագրերին,
- անհրաժեշտ է հաստատել մարդասիրական աղէտի աջակցութեան եւ առողջապահութեան համագործակցութեան մեխանիզմներ,
- Թուրքիայի եւ Հայաստանի միջեւ անվտանգութեան եւ վստահութեան կառուցողական միջոցները պէտք է է՛լ աւելի զարգանան,
- պէտք է խրախուսուի կրօնական փոխըմբռնումը,
- հայ եւ թուրք ժողովուրդները պէտք է ունենան աւելի մեծ վստահութիւն, որ իրենց կառավարութիւններն աշխատում են յաղթահարել անցեալի դժուարութիւնները²¹:

ՀԹՀՅԻ գործունեութիւնը ծաւալուեց հայ եւ թուրք հասարակական-քաղաքական շրջանակների ուշադրութեան պայմաններում: Նրա ամենանշանակալից արդիւնքը, թերեւս, ԱԱՄԿի եզրակացութիւնն էր թէ՛ 1915ին հայերի նկատմամբ

Օսմանեան Կայսրութիւնում կատարուածը որակում է իբրեւ ցեղասպանութիւն, սակայն դրանից իրաւական հետեւանքներ չեն բխում²²:

Հայաստանում եւ Սփիւռքում ՀԹՀՅի ստեղծումը սառը ընդունելութիւն գտաւ: Թուրքական հասարակական կարծիքի դրսեւորումները ՀԹՀՅի վերաբերեալ աւելի զուսպ եւ լաւատեսական էին: Լաւատեսական էր նաեւ ամերիկեան արձագանգը: ՀԹՀՅի հայ անդամներն իրենց կիսագաղտնի աշխատելաճոհի համար հասարակական քննադատութեան հզօր ալիքի տակ ընկան: Այդ քննադատութիւնը բխում էր այն իրական մտահոգութիւնից, որ ՀԹՀՅի հանդիպումների ընթացքում հնարաւոր է քննարկուեն հարցեր, որոնք յետագայում շահարկուեն Հայոց Ցեղասպանութեան միջազգային ճանաչումը ձախողելու համար²³:

Ակնյայտ է, որ ՀԹՀՅն ուներ ինչպէս դրական, այնպէս էլ բացասական կողմեր: Մեր կարծիքով դրական կողմերից էր, որ ԽՍՀՄ փլուզումից յետոյ հայերին եւ թուրքերին մէկ սեղանի շուրջ նստեցնելու առաջին յաջողուած փորձն էր: Առաջին անգամ էր, որ հայերը եւ թուրքերը դէմ դիմաց նստած փորձում են լուծել երկու ազգերի միջեւ եղած խնդիրները: Այն «պատմական» յանձնաժողով չէր: Այսինքն, անտեղ այդպէս էլ լուրջ քննարկման առարկայ չդարձաւ Հայոց Ցեղասպանութեան եղելութեան փաստը: Այսպիսի քննարկումների փաստի միքանի տարի առաջ դժուար կը լինէր հաւատալ, քանի որ այն ժամանակ թուրքերը պատրաստ էին քննարկել միայն Հայոց Ցեղասպանութեան պատմականօրէն լինել-չլինելու փաստը: Յանձնաժողովը չքննարկեց դարաբարեան հակամարտութիւնը, այսինքն երկու երկրների յարաբերութիւնները զերծ մնացին Ադրբեջանի հետ Հայաստանի ունեցած յարաբերութիւններից կախուածութիւնից:

Ինչ վերաբերում է նախաձեռնութեան բացասական կողմերին, ապա՝ ՀԹՀՅում հայկական կողմից ներկայացուած չէին մի շարք Հայաստանի քաղաքական ազդեցիկ ուժեր, նաեւ՝ Սփիւռքի լայն ներկայացուցչութեան ուժեր: Այսպիսի ներկայութիւնը կը նպաստի բանակցութիւնների ընթացքում իրական արդիւնքներ ստանալու ջանքերին: Յանձնաժողովի գոյութեան փաստն իր ուղղակի ազդեցութիւնն ունեցաւ Հայոց Ցեղասպանութեան միջազգային ճանաչման գործընթացի վրայ, թէկուզ եւ մէկ շատ պարզ

պատճառով, որ այդ երկրները չցանկացան իրենց քայլերով վտանգել սկսուած երկխօսութիւնը: Միւս կողմից այն աւելի խորացրեց ամերիկահայ լոբբիստական կազմակերպութիւնների միջեւ եղած պառակտումը, որոնց միասնական գործողութիւններից է հիմնականում կախուած ԱՄՆում Հայոց Յեղասպանութեան ճանաչումը: ՀԹՀՅն իր բնոյթով փորձ էր թուրքական կողմից հայերի հետ խօսել ոչ թէ որպէս պետականութիւն ունեցող ազգի, այլ պառակտուած մի ժողովրդի, ինչպէս եւ գործել են դարեր շարունակ թուրքական իշխանական օղակները:

Գ. ՊԱՏՄԱՐԱՆՆԵՐԻ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՀԱՐՅԸ ՀԱՅ-ԹՈՒՐԹԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԵՆԹԱԽՈՐՔՈՒՄ

Հայ-թուրքական յարաբերութիւնների կարգաւորման մի նոր փորձ էր 2005 Ապրիլին Թուրքիայի վարչապետի եւ ՀՀ նախագահի միջեւ տեղի ունեցած նամակագրական կապը: 2005 Ապրիլին վարչապետ Էրդողանը նամակ ուղարկեց ՀՀ նախագահին՝ առաջարկելով ստեղծել պատմաբանների համատեղ յանձնաժողով:

Էրդողանը, մասնաւորապէս, գրում էր.

Գաղտնիք չէ, որ մենք տարբեր մեկնաբանութիւններ ունենք այն դէպքերի առնչութեամբ, որոնք տեղի են ունեցել մեր ընդհանուր պատմութեան որոշակի ժամանակահատուածում: Այս տարբերութիւնները, որոնք մեր ազգերի համար անցեալի ցաւալի յիշողութիւնների հետքեր են թողել, այսօր շարունակում են խոչընդոտել երկու երկրների միջեւ բարեկամական յարաբերութիւնների բարելամանը:

Ես հաւատացած եմ, որ որպէս երկու երկրների առաջնորդներ, մեր առաջնային պարտքն է ապագայ սերունդներին թողնել խաղաղ եւ բարեկամական միջավայր, որտեղ կը գերակայեն հանդուրժողականութիւնը եւ փոխադարձ յարգանքը:

[...] Այս շրջանակներում մենք հրաւեր ենք ուղարկում ձեր երկիր մեր երկու երկրների պատմաբաններից եւ այլ մասնագէտներից բաղկացած համատեղ խմբի ստեղծման կապակցութեամբ, որը կ'ուսումնասիրի 1915ի զարգացումները եւ դէպքերը ոչ միայն Թուրքիայի եւ Հայաստանի արխիւներում, այլ նաեւ միւս բոլոր համապատասխան երրորդ երկրների արխիւներում, եւ կը ներկայացնի իր եզրայանգումները միջազգային հանրութեանը:

Ես յուսով եմ, որ մեր առաջարկությունը, որը նպատակ ունի յաջորդ սերունդներին ժառանգել բարեկամական եւ առաւել խաղաղ միջավայր, կը ստանայ ձեր համաձայնութիւնը: Եթէ ձեր կողմից մենք ստանանք նման խումբ հիմնելուն ուղղուած դրական պատասխան, մենք պատրաստ կը լինենք այս առաջարկութեան մանրամասները քննարկել ձեր երկրի հետ²⁴:

2005 Ապրիլի 26ին վարչապետին ուղղուած պատասխան նամակում նախագահ Քոչարեանը, մասնաւորապէս, գրում է.

Իսկապէս, որպէս հարեւաններ, մենք պէտք է փորձենք ուղիներ որոնել այժմ եւ ապագայում համերաշխ ապրելու համար: Այդ իսկ պատճառով հենց սկզբից մենք առաջարկել ենք հաստատել դիւանագիտական յարաբերութիւններ, բացել սահմանները եւ երկխօսութիւն սկսել երկու երկրների ու ժողովուրդների միջեւ:

Կան հարեւան երկրներ, յատկապէս եւրոպական մայրցամաքում, որոնք դժուարին անցեալ են ունեցել, որի շուրջ նրանք համաձայն չեն: Սակայն դա նրանց չի խանգարել բաց սահմաններ, նորմալ յարաբերութիւններ, դիւանագիտական կապեր, մէկը միւսի մայրաքաղաքում ներկայացուցիչներ ունենալ, թէեւ նրանք շարունակում են քննարկել այն, ինչը բաժանում է նրանց:

Անցեալին անդրադառնալու Ձեր առաջարկը չի կարող արդիւնաւետ լինել, եթէ այն չի անդրադառնում ներկային եւ ապագային: Արդիւնաւետ երկխօսութեան մէջ ներգրաւուելու համար մեզ անհրաժեշտ է ստեղծել նպաստաւոր եւ համապատասխան քաղաքական միջավայր: Երկկողմ յարաբերութիւնների զարգացման պատասխանատւութիւնը կրում են կառավարութիւնները, եւ մենք իրաւասու չենք այն պատուիրակել պատմաբաններին: Ուստի, մենք առաջարկել ենք եւ կրկին առաջարկում ենք առանց նախապայմանների մեր երկու երկրների միջեւ հաստատել նորմալ յարաբերութիւններ: Ահա այս համատեքստում կարող է գումարուել միջկառավարական յանձնաժողով՝ քննարկելու երկու երկրների միջեւ առկայ ցանկացած խնդիր կամ բոլոր կարեւոր խնդիրները, նպատակ ունենալով լուծել դրանք եւ հասնել փոխըմբռնման²⁵:

2005 Ապրիլի 29ին հրապարակուեցին «Հայաստանի Հետ Կարելի է Քաղաքական Յարաբերութիւններ Հաստատել» խորագրով Էրդողանի պարզաբանումները: Միլլիէթի լրագրողների հետ հանդիպմանը Թուրքիայի վարչապետը, նշել էր. «Ես չեմ ասում, որ Հայկական հարցով զբաղուեն միայն պարմաբանները: Թող նրանց միանան քաղաքագէտները, իսկ վերջնական որոշումը կայացնեն քաղաքական գործիչները: Մենք պատրաստ ենք հաշտուելու մեր պարմութեան հետ: Նրանք պատրաստ են հաշտուելու: Չենք կարող տեղահանութիւնն իբրեւ «ցեղասպանութիւն» որակելու թիրիմացութեան մէջ գործողներին ընդունել: Քոչարեանն իր պատրաստիւնն նամակում փորձում էր մեզ յիշեցնել, թէ դա քաղաքական գործիչների խնդիրն է: Մենք այդ մասին շատ լաւ գիտենք: Սակայն քաղաքական գործիչներն առհասարակ թիւմ են ունենում: Պարմաբաններից, քաղաքագէտներից, արխիւի մասնագէտներից կազմուած այս թիւմն աշխատանք է կատարում եւ մեզ ներկայացնում, իսկ մենք նրանց աշխատանքի հիման վրայ որոշում ենք կայացնում: Առանց այս ամէնի մեզանից պահանջում են անյապաղ բացել սահմանները: Շատ բարի, սակայն դու ինձ սահման բացելու պահանջ ներկայացնելիս ինչու՞ ես շարունակում ցեղասպանութեան միջազգային ճանաչման պայքարը»²⁶:

2005 Ապրիլին Wikileaks-ն հրապարակել էր Քոչարեանի նամակ, ինչպէս նաեւ տուեալ ժամանակ Հայաստանում ԱՄՆի դեսպան Ջոն Էլընգի մեկնաբանութիւնները: Մասնաւորապէս, Էլընգը, լուրջ մտահոգութիւն յայտնելով Էրդողանի նամակի լրջութեան եւ անկեղծութեան կապակցութեամբ, ընդգծել էր. «Էրդողանի առաջարկը նորութիւն չէ. 1915 թուականի դէպքերը պարմաբանների կողմից քննարկելու կոչեր հնչել են Թուրքիայի իւրաքանչիւր վարչակազմի կողմից՝ հակազդելու համար ցեղասպանութեան ճանաչմանը, յարկապէս երբ միջազգային հանրութեան հետաքրքրութիւնը եւ ուշադրութիւնն ուժեղանում էր այդ հարցի նկատմամբ: Այդուհանդերձ, առաջին անգամ է նման առաջարկ արում գրաւոր եւ ամենաբարձր մակարդակով»²⁷:

Այսպիսով, Թուրքիայի որդեգրած քաղաքականութեան հետեւանքով որեւէ էական տեղաշարժ հայ-թուրքական յարաբերութիւններում չէր նկատուում:

Հայ-թուրքական յարաբերություններում ստեղծուած փակուղային իրավիճակի համար Թուրքիան մեղադրում էր ՀՀին: 2007 Նոյեմբեր 7ին Բաքու կատարած իր այցի ընթացքում նախագահ Գիլը հայ-թուրքական յարաբերություններում ստեղծուած անելի համար մեղքը բարդում է միայն Երեւանի վրայ. «Թուրքիան ճանաչեց Հայաստանի Հանրապետութեան անկախութիւնը 1991 Դեկտեմբերի 16ին: Չնայած Հայաստանը սեւծովեայ ափամերձ երկիր չէ, Թուրքիան հրաւիրեց նրան Սեւծովեան Տնտեսական Համագործակցութեան Կազմակերպութեանը (ՄՏՀԿ) միանալու: Դրան հակառակ խնդիրներ առաջ եկան, որոնք խանգարեցին Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ դիւանագիտական յարաբերությունների հաստատմանը: Կարծում եմ, Թուրքիան պատասխանատու չէ ներկայ իրավիճակի համար: Ժամանակն է, որ ամբողջ աշխարհը տեսնի, որ ներկայ իրավիճակի համար պատճառը գտնուում է մի կողմից Թուրքիայի հանդէպ Հայաստանի թշնամական դիրքորոշման եւ միւս կողմից, հարեւան Ադրբեջանի տարածքների շարունակուող գրաւման մէջ: Մինչ Հայաստանը քաղաքականութիւն է վարում 1915ի դէպքերին այլ երկրների խորհրդարաններում պիտակաւորումներ տալով (որպէս ցեղասպանութիւն), կարիք չկայ յարաբերությունների կարգաւորման մէջ որեւէ առաջընթաց ակնկալել: Ներկայում Կրաստանի եւ Ադրբեջանի ժողովուրդները մեծ օգուտներ են քաղում տարածաշրջանային ծրագրերից: Տարածաշրջանային ծրագրերում կարող են ներգրաւուել միայն այն երկրները, որոնք այլ երկրների տարածքային ամբողջականութեանը վերաբերում են յարգանքով եւ ցանկանում խաղաղ համագոյակցութիւն: Հայաստանը եւ նրա ժողովուրդը պէտք է հասկանան դա»²⁸:

Այսպիսով ակնյայտ է, որ հակառակ ՀՀ անկախութեան վերականգնումից յետոյ հայ-թուրքական յարաբերությունների կարգաւորման միքանի փորձերի, դրանք խորհրդապահական հանդիպումներից այն կողմ չանցան: 2007ի շուէյցարական միջնորդութեամբ սկսուած փորձն էլ հաւանաբար դրանով աւարտուէր, եթէ «հնգօրեայ պատերազմ»ից յետոյ Հարաւային Կովկասում չստեղծուէր միանգամայն նոր իրավիճակ, որին շատ արագ արձագանգեց Թուրքիան²⁹: Տարածաշրջանում ձեւաւորուած նոր իրողութիւնների եւ ռուս-ամերիկեան սրուած աշխարհաքաղաքական մրցակցութեան պայմաններում հայ-

թուրքական յարաբերությունների կարգաւորման
խորհրդապահական գործընթացը ստացաւ արտաքին
դրսետորումներ եւ՝ էապէս աւելի մեծ նշանակութիւն:

Դ. ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱԶՄԱՆ
ԵՒ ԴԱՏԱՊԱՐՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԾԱԽԱԼՈՒՄԸ ԵՒ
ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱԿԱՔԱՅԼԵՐԸ

Յեղասպանութեան իրողութեան հերքման խնդիրը թուրքական
իշխանութիւնների օրակարգի հարց դարձաւ: Հայոց
Յեղասպանութեան ճանաչման պահանջների վերացումը
հանդիսանում է ՀՀի հետ յարաբերությունների բարելւման
համար Թուրքիայի առաջ քաշած նախապայմաններից մէկը:
Բնականաբար, այս հարցում թուրքական իշխանութիւնների
մտավախութեան հիմքում հիմնականում ընկած են միջազգային
տարբերատեաններում ու արտասահմանեան խորհրդարաններում
Հայոց Յեղասպանութեան ճանաչման քննարկումները: Անկարան
եռանդուն միջոցներ է ձեռնարկում դրանց դէմ՝ սպառնալով
համապատասխան միջոցների դիմել՝ ոչ միայն վերանայելով իր
յարաբերությունները Հայոց Յեղասպանութեան օրինագիծ
քննարկող երկրների հետ, այլեւ ՀՀի հանդէպ ուղղակի
պատժամիջոցներ կիրառելու միջոցով: Պաշտօնական Անկարան
շատ զգայուն է արձագանգում յատկապէս ԱՄՆում կամ
Եւրոպական երկրներում հայկական լոբիի ունեցած
յաջողութիւններին:

1990ականներին մի շարք երկրներ եւ կազմակերպութիւններ
պաշտօնապէս ճանաչեցին եւ դատապարտեցին Հայոց
Յեղասպանութիւնը: Հայոց Յեղասպանութեան միջազգային
ճանաչումը եւ դատապարտումը ՀՀ արտաքին
քաղաքականութեան գերակայ խնդիր հռչակումից յետոյ այս
գործընթացը դարձաւ շարունակական: 2015ին աշխարհի աւելի
քան 23 երկրներ 1915ի Օսմանեան Կայսրութիւնում տեղի ունեցած
իրադարձութիւնները որակել են որպէս ցեղասպանութիւն:
Եւրախորհրդարանը, Եւրոպայի Խորհրդի Խորհրդարանական
Վեհաժողովը, մի շարք միջազգային կազմակերպութիւններ,
տարբեր երկրների առանձին նահանգների իշխանութիւններ,
տեղական ինքնակառավարման մարմիններ, համաշխարհային
ճանաչում վայելող բազմաթիւ ցեղասպանագէտներ եւ

համապատասխան գիտական ու փորձագիտական կառույցներ, ցեղասպանությունը չճանաչող բազմաթիւ երկրների քաղաքական ու հասարակական գործիչներ, վերլուծաբաններ եւ լրագրողներ 1915ի իրադարձությունները նոյնպէս որակում են որպէս Ցեղասպանություն, ինչը առաջատար ցեղասպանագէտներին հիմք է տուել պնդելու, որ Հայոց Ցեղասպանությունը այլեւս ճանաչուած ցեղասպանություն է³⁰:

2000ից Հայոց Ցեղասպանութեան ժխտման քաղաքականութեան իրականացման նոր մեթոդների եւ ձեւերի փնտռտուքը պաշտօնական Անկարան դարձրեց ազգային անվտանգութեան խնդիր: Այն ներառելով Թուրքիայի Ազգային Անվտանգութեան Խորհրդի (ԹԱԱԽ) նիստերի օրակարգում, ստեղծուեցին նոր կառույցներ ժխտողականութիւնն առաջ մղելու համար: Մասնաւորապէս, 2001 Մայիսին ԹԱԱԽի որոշումների իրականացման ուղղութեամբ վարչապետի կարգադրութեամբ ստեղծուեց «Ցեղասպանութեան Վերաբերեալ Անհիմն Պնդումների Դէմ Պայքարը Համակարգող Խորհուրդ»³¹: Խորհրդի նախագահ նշանակուեց փոխվարչապետը, իսկ կազմ ընդգրկուեցին տարբեր պետական գերատեսչութիւնների բարձրաստիճան ներկայացուցիչներ: Խորհուրդը սկսեց գործել ԹԱԱԽ գլխաւոր քարտուղարութեան համակարգում եւ նրա հսկողութեան ներքոյ գործունէութիւնը համակարգում էր գլխաւոր շտաբի գնդապետ Միւսին Օնգէօրէնը³²:

Խորհուրդի նիստերը տեղի են ունենում եռամսեակը մէկ: Այն գործում է ցայսօր: Խորհուրդը ստեղծել էր աշխատանքային խմբեր, որտեղ ներգրաւուել էին պաշտօնաթող դիւանագէտներ եւ վստահութիւն վայելող արտասահմանեան դիւանագէտներ³³: Տարիներ շարունակ Խորհրդի կողմից ստեղծած աշխատանքային խմբերի գործունէութիւնը հիմնականում ընթանում էր փակ դռների ետեւում, ինչի պատճառով հնարաւոր չէ պարզաբանել, թէ իրաւական բնոյթի ի՞նչ խնդիրներ էին գտնուում նրա քննարկումների կենտրոնում: 2006 Նոյեմբերին ԱԳ նախարար եւ փոխվարչապետ Գիւլի նախագահութեամբ տեղի ունեցաւ խորհրդի հերթական նիստը, որտեղ քննարկուեց երեք տարբերակ՝ 1. դիմել Մարդու Իրաւունքների Եւրոպական Դատարան՝ Ֆրանսիայի խորհրդարանի Հայոց Ցեղասպանութեան մասին յայտնի որոշումը բողոքարկելու նպատակով, 2. դիմել Հաագայի

Արդարադատության Միջազգային Դատարան, 3. դիմել Հաագայի Միջազգային Իրաւարար Մշտական Դատարան³⁴:

Հարկ է նշել, որ մի կողմից՝ նպատակ ունենալով շարունակաբար առաջ մղել Հայոց Յեղասպանութեան Ժխտման գործընթացը, միւս կողմից՝ փորձելով ժամանակին համարժէք արձագանգ տալ եւրոպական մայրաքաղաքներում ծաւալուող Հայոց Յեղասպանութեան ճանաչման եւ դատապարտման գործընթացներին, վարչապետ Էրդողանը 2002 Դեկտեմբերին Եւրայանձնաժողովի նախագահ Ռոմանո Պրոդիի Անկարա կատարած պաշտօնական այցի շրջանակներում տեղի ունեցած մամուլի ասուլիսի ժամանակ յայտարարեց. *«Նախ եւ առաջ մենք պէտք է պատասխանենք այն հարցին, թէ եղե՞լ է արդեօք յեղասպանութիւն, թէ՞ ոչ: Այս խնդիրը հնարաւոր չէ լուծել առանց հարցի պատասխանը գտնելու»*³⁵:

ԱԶԿ առաջնորդի եւ երկրի վարչապետի այս պատասխանը կարող էր տպաւորութիւն ստեղծել, թէ առաջին անգամ է, երբ բարձրաստիճան թուրք պետական գործիչը միանշանակօրէն չի հերքում Հայոց Յեղասպանութեան փաստը: Սակայն ժամանակը ցոյց տուեց, որ այս եւ նման յայտարարութիւններն աւելի շուտ նպատակաւորուած էին Հայոց Յեղասպանութեան հարցը քննարկումների եւ վիճաբանութիւնների հոգեմաշ դաշտ տեղափոխելուն, ինչի արդիւնքում շահում էր միայն գործնական թուրքական դիւանագիտութիւնը: Այդ յայտարարութիւնը ազդանշան էր Եւրոպական Միութեանը՝ անդամակցութեան բանակցութիւններում շահեկան եւ կառուցողական դիրքում երեւալու նպատակով:

Այդ դիւանագիտութեան դրսեւորման մէկ այլ օրինակ էր ԱԳ նախարարութեան գիտութեամբ եւ աջակցութեամբ Պոլսոյ հայոց պատրիարք Մեսրոպ Բ. Մութաֆեանի այցելութիւնը եւրոպական մայրաքաղաքներ, որտեղ նա, փաստօրէն, աջակցում էր թուրքական իշխանութիւններին Եւրամիութեան անդամակցութեան բանակցութիւններում: Այդ այցելութիւններին ուշադրութեամբ հետեւում էին թուրքական դեսպանութիւնները եւ մամուլը: Օրինակ, թուրքական *Հիւրիէթ* թերթը գրել է. *«Մինչ այդ Ֆրանսիա այցելող պատրիարքներին ընդունում էին ֆրանսիական ծերակոյտը, ազգային ժողովը կամ էլ ֆրանսիական համայնքը, եւ նրանք թուրքական դեսպանաւորներից անկախ էին գործում: Մինչդեռ*

Մեսրոպ Բ.ն, ի տարբերություն նախորդների, դեսպանության հետ սերտ համագործակցության մէջ, հանդիպելով ֆրանսիական քաղաքական գործիչներին եւ մամուլի ներկայացուցիչներին, լրբիստական բռնութիւններին էր ծաւալում ի նպաստ Թուրքիայի»³⁶:

Չնայած ակնյայտ է, որ իր քաղաքական առաքելութեան մէջ Պոլսոյ հայոց պատրիարքն առաջնորդում էր պոլսահայութեան եւ պատրիարքարանի շահերով, սակայն հայ իրականութեան մէջ նրա գործունէութիւնը նաեւ քննադատուել է այն իմաստով, որ նման լրբիստական գործունէութիւնը քաղաքական գործիչների խնդիրն է, այլ ոչ թէ պատրիարքի³⁷:

Ուշագրաւ է, որ եթէ Հայոց Յեղասպանութեանը հետեւած ինը տասնամեակները մասնագէտների կողմից բնորոշում են որպէս Թուրքիայում «լռութեան», «մոռացութեան» տարիներ, ապա սկսած 2000ից՝ կարելի է խօսել հայկական «տաբու»ի նահանջի եւ «լռութեան պատի» ճեղքման մասին: 2000ականներին թուրքական հասարակութեան մէջ յստակ գծագրուել են ինչպէս ցեղասպանութեան ժխտողականութեան յամառ եւ հետեւողական գերակայող կողմնակիցների, այնպէս էլ սեփական պատմութեան հետ առերեսուելու, ճշմարտութիւնը վեր հանելու, ցեղասպանութիւնն ընդունելու կողմնակիցների պայմանական խմբաւորումները (Էլիֆ Շաֆաք³⁸, Օրհան Փամուք, Քեմալ Եալչըն, Ֆեթիհ Զեթին եւ ուրիշներ):

Ըստ թուրքագէտ Անուշ Յովհաննիսեանի, Հայոց Յեղասպանութեան փաստի ուրացման կողմնակիցներն իրենց «թուրք հայրենասէրներ» ներկայացնող մեծաթիւ բանակ են (ազգայնականներ, իսլամ ծայրայեղականներ), որոնց կարծիքով՝ իրենց ձեւակերպմամբ «այսպէս կոչուած ցեղասպանութեան» մասին խօսողներն իսկ «ազգի դաւաճան են»: Այս խմբում տարածուած են հետեւեալ տեսակէտները.-

ա) հայերի եւ Արեւմուտքի (քրիստոնեաների) պահանջը՝ ճանաչել ցեղասպանութիւնը, պայմանաւորուած է թուրքերին որպէս բարբարոս ներկայացնելու աւանդական վերաբերմունքով, մինչդեռ «թուրքի բարեկամը թուրքն է»,

բ) թուրքերը բացառիկ հանդուրժող են փոքրամասնութիւնների նկատմամբ, նրանց պատմութեան եւ պետական մշակոյթի մէջ տեղ չունի Արեւմուտքին բնորոշ ցեղասպանածին ցեղամոլութիւնը

(ցեղասպանութիւնը նոյնացում է նացիզմի հետ, բացակայում է պատկերացումը ցեղասպանութիւնների էութեան, տեսակների եւ տարբեր երկրներում դրա տարբեր դրսեւորումների մասին),

գ) հայերը ցեղասպանութեան հարցը բարձրացնում են Թուրքիայից փոխհատուցում եւ «հող» պահանջելու նպատակով (էրդողանի պնդմամբ՝ «*հայերը մի ցաւ ունեն՝ թուրքերից հալածուցում պոկել*»),

դ) Հայոց Ցեղասպանութեան ճանաչումը «Պանդորայի պահոցը բացելու» վտանգ է պարունակում, քանի որ կը պահանջուի վերանայել հանրապետութեան հիմնադրման, քեմալականութեան, պետական գաղափարախօսութեան, քաղաքական վարչաձեւի, երկրի ղեկավարների գործունէութեան գնահատման, բանակի դերի, ուսումնական ծրագրերի արդիւնաւէտութեան տարաբնոյթ հիմնահարցեր, ինչը երկրում ցնցումների առաջացման պատճառ կարող է դառնալ,

ե) պէտք է առաջ գնալ՝ չսեւեռուելով ցաւոտ անցեալի վրայ, նուազագոյն չափով գործակցել Հայաստանի եւ հայկական սփիւռքի հետ՝ ելնելով Թուրքիայի գործնական շահերից,

զ) ճանաչման գործընթացն ընկալւում է որպէս Արեւմուտքի՝ Թուրքիայի նկատմամբ ամենադական թշնամանքի արտայայտութիւն, ճնշում կամ պատրուակ՝ Թուրքիան ԵՄ չընդունելու համար³⁹:

Ցեղասպանութեան ճանաչման դիրքորոշմանը սատարողները Թուրքիայի՝ մենատիրական վարչաձեւից դէպի իրական ժողովրդավարական համակարգ անցնելու կողմնակիցներ են: Բայց նրանց դիրքորոշումներում էլ կան որոշակի տարբերութիւններ: Յատկանշական է, որ պատմութեան հետ առերեսուելու արեւմտեան (գերմանական) մոդէլը բնորոշ չէ թուրքական մշակոյթին: Ենթադրւում է, որ ցեղասպանութեան ճանաչման փաստի՝ առանց համապատասխան որակման ճանաչումը չպէտք է յանգեցնի փոխհատուցման, ցեղասպանութեան ճանաչումը չի կարող լինել արտաքին ճնշումների արդիւնք: Կայ նաեւ կարծիք, որ թուրքերը կարող են ճանաչել ցեղասպանութիւնը՝ դրանից բխող որոշակի հետեւանքներով⁴⁰: Յօգուտ այս տեսակէտի հանդէս եկող թուրք մտաւորական, իրաւապաշտպան եւ գրահրատարակիչ Ռազրփ Զարաքօլուն այսպէս է բանաձեւել Հայոց Ցեղասպանութեան

փաստն ուրացողների դիրքորոշումը. «Ձարմանալի է, փոքր Հայաստանը վախեցնում է մեծ Թուրքիային: Ինչու? Որովհետեւ մարդկության դեմ յանցանք է կատարուել: Թուրքիային վախեցնում է ոչ թե Հայաստանը, այլ մեղքի զգացումը... Մեզ դաստիարակչական մեծ աշխատանք է սպասում: Մենք պարտաւոր ենք մերժել պաշտօնական տեսակէտներն ու ազգայնամոլութեան դրսեւորումները»⁴¹:

ՀՐԱՆԴ ՏԻՆՔԻ ՍՊԱՆՈՒԹԻԻՆԸ

2007 Յունուարի 19ին Ստամբուլում սպանուեց Ակօս թերթի գլխաւոր խմբագիր, Թուրքիայում յայտնի լրագրող, հրապարակախօս եւ ժողովրդավարական բարեփոխումների օգտին հանդէս եկող հասարակական գործիչ Հրանդ Տինքը: Այս սպանութիւնը ցնցեց թուրքական հասարակութեանը: Հազարաւոր մարդիկ հաւաքուեցին Ստամբուլի Թաքսիմ Հրապարակում «Ես Տինքն եմ, Ես Հայ եմ» կարգախօսներով: Այդ սպանութիւնը եւ դրան յաջորդած քաղաքական գործիչների հրապարակային ելոյթները, հասարակական զգացմունքային քննարկումները եւ ԶԼՄ հրապարակումները, ինչպէս նաեւ ԱՄՆից եւ Եւրոպայից ստացուող արձագանգները աննախադէպ առիթ դարձան՝ կրկին անդրադառնալու Հայկական Հարցին եւ հայ-թուրքական յարաբերութիւնների կարգաւորման հիմնախնդրին: Վերաբերմունքն այդ սպանութեանը դարձաւ մի նոր, իւրօրինակ ցուցիչ, որը բաժանեց Թուրքիայում ցաւոտ «Հայկական Հարցը» լուծելու կողմնակիցներին եւ հակառակորդներին: Այս թեման հետաքննութեան ամբողջ շրջանում եւ առ այսօր շարունակում է արժարժուել Թուրքիայում, որտեղ դեռ չի աւարտուել դատաքննութիւնը եւ չի փակուել Տինքի սպանութեան քրէական գործը: Այդ պատճառով էլ մենք համոզուած ենք, որ Տինքի սպանութեան ազդեցութիւնը Թուրքիայի ժամանակակից ներքաղաքական խօսույթի վրայ ինքնուրոյն հետազօտութեան թեմա է⁴²:

Տինքի սպանութիւնը դատապարտուեց նաեւ Թուրքիայի իշխանութիւնների կողմից⁴³: Թուրքիայի նախագահ Սեզէրը յայտարարեց. «Խորապէս վշտացած եմ Ակօս թերթի խմբագրատան առջեւ Հրանդ Տինքի սպանութեան կապակցութեամբ: Ես խստորէն դատապարտում եմ այս զագրելի եւ

ամօթալի արարքը»⁴⁴: Իսկ վարչապետ Էրդողանը յայտարարեց. «Հրանդ Տինքի դէմ յարձակումը՝ յարձակում է մեզ բոլորիս դէմ՝ մեր միասնականության, մեր ամբողջականության, մեր խաղաղության եւ կայունության դէմ: Նրանք, ովքեր պատասխանատու են յարձակման համար, նրանք, ովքեր ծրագրել կամ հրահրել են այն, անյապաղ կը բռնուեն եւ պատասխանատուութեան կ'ենթարկուեն»⁴⁵.

Չնայած Թուրքիայի ղեկավարութեան կողմից Տինքի սպանութեան դատապարտմանը եւ յանցագործութեան պատասխանատուներին պատասխանատուութեան կանչելու թուրքական հանրութեան պահանջի, մինչ օրս երկրի իշխանութիւնները աւարտի չեն հասցրել սպանութեան հետաքննութիւնը եւ պատասխանատուութեան չեն կանչել յանցագործութեան կազմակերպիչներին:

ԱՄՓՈՓՈՒՄ

Ելնելով ասուածից, կարելի է եզրակացնել.-

1. ԱԶԿի իշխանութեան գալու առաջին տարիներին Թուրքիայի ղեկավարութիւնը յայտարարութիւններ արեց՝ բարելաւելու հայ-թուրքական յարաբերութիւնները: Պաշտօնական Անկարան, սակայն, շարունակեց հայ-թուրքական յարաբերութիւնների կարգաւորումը կապել հայ-ադրբեջանական յարաբերութիւններին:
2. Հայ-թուրքական յարաբերութիւնների վրայ իր նշանակալի ազդեցութիւնն ունեցաւ նաեւ Հայոց Յեղասպանութեան միջազգային ճանաչման եւ դատապարտման գործընթացը ՀՀ արտաքին քաղաքական գերակայ խնդիր հռչակելը:
3. ԱՄՆը եւ նրա դաշնակիցները խրախուսեցին հայ-թուրքական կարգաւորմանն ուղղուած երկխօսութիւնն ինչպէս դիւանագիտական, քաղաքական, այնպէս էլ հասարակական, փորձագիտական մակարդակներում: Չնայած այս երկխօսութեան գործնական արդիւնքների բացակայութեանը, տարբեր մակարդակներում իրականացուող հանդիպումներն ու քննարկումները յստակեցրին կողմերի պատկերացումներն ու դիրքորոշումները:
4. ՀԹՀՅն, չնայած կրում էր ընդգծուած ոչ-պաշտօնական բնոյթ, առաջացրեց զգալի հասարակական-քաղաքական

- հետաքրքրություն Թուրքիայում եւ ՀՀ-ում: Այն ուղեկցում էր աշխուժ, երբեմն կտրուկ, յուզական մեկնաբանություններով ու դիրքորոշումներով: Ըստ ուսումնասիրողների՝ թուրքական հասարակական-քաղաքական դաշտում դրա արձագանգները հիմնականում չէզոք կամ դրական էին, իսկ հայկականում՝ մեծամասամբ բացասական:
5. ՀԹՀՅ երկամեայ գործունեության արդիւնքը հանդիսացաւ ԱԱՄԿի եզրակացութիւնը, որը 1915ի հայկական ջարդերի նկատմամբ կիրառելի համարեց «ցեղասպանութիւն» եզրը, եւ պնդեց, որ այդ ճանաչումից իրաւական հետեւանքներ չեն բխում:
 6. ՀԹՀՅ գործունեության շրջանում ՀՀ հասարակական-քաղաքական դաշտում յաղթեց այն մօտեցումը, թէ՛ հայ-թուրքական յարաբերութիւնների կարգաւորումը չի կարող լինել մասնաւոր անձանց, հասարակական խմբերի գործունեության գործառոյթ, այլ պէտք է դառնայ երկկողմ միջպետական երկխօսութեան թեմա: Վարչապետ Էրդողանի եւ նախագահ Քոչարեանի նամակագրութիւնը, այդ երկխօսութիւնը եւ նրա հնարաւոր բաղադրիչների քննարկումը բարձրացրեց հնարաւոր ամենաբարձր մակարդակի:
 7. Թուրքիայի իշխանութիւնները շարունակեցին վարել Հայոց Ցեղասպանութեան փաստը ժխտող քաղաքականութիւն: Նրանք փնտռեցին ժխտողական քաղաքականութեան առաջնղման նոր, թարմ մօտեցումներ եւ այս ուղղութեամբ աւելի մեծ ջանքեր գործադրեցին: Ժխտման գործընթացին էին լծուած Թուրքիայի իշխող ԱԶԿն, խորհրդարանական ազգայնական ընդդիմութիւնը, երկրի Ազգային Անվտանգութեան Խորհուրդը, Թուրքիայի ազգային մեծ ժողովը, պետական համակարգում գործող հետազօտական եւ վերլուծական կենտրոնները: Այդ ջանքերը, արտասահմանում էական յաջողութեան չհասան եւ չկարողացան կասեցնել Հայոց Ցեղասպանութեան ճանաչման ու դատապարտման ընթացքը:
 8. Առաջին անգամ Թուրքիայի պատմութեան մէջ նշանակալից երեւոյթ դարձաւ սեփական պատմութեան հետ աւելի անկեղծ առերեսուելու, Հայոց Ցեղասպանութեան փաստը հրապարակային հարթակներում քննարկելու իրողութիւնը: Առաջ եկան անկախ, իշխանական տեսակէտներից տարբերուող

հայեացքներ ունեցող մտաւորականների խմբեր, որոնք հանդէս էին գալիս Հայոց Յեղասպանութեան իրողութիւնն ընդունելու դիրքերից: Այսպիսիները, սակայն, կազմում էին փոքրամասնութիւն, եւ նրանց գործունէութիւնը նպատակ էր հետապնդում, ի թիւս այլ խնդիրների, պարզել եւ հասկանալ, թէ ի՞նչ կը պատահի Թուրքիայի հետ, եթէ հրաժարուի ժխտողականութեան պաշտօնական քաղաքականութիւնից:

9. Հրանդ Տինքի սպանութիւնը եւ դրան յաջորդած հասարակական բուռն քննարկումները դարձան իրատեսակ խթան՝ աւելի համարձակ ու աւելի անկախ դիրքորոշումների բիրեղացման համար:
10. Հասարակական հետաքրքրութեան խնդիրներից մէկը դարձաւ, այսպէս կոչուած, «պատմաբանների յանձնաժողովի հարցը»: Արծարծելով դրա ստեղծման «անհրաժեշտութիւնը»՝ Թուրքիայի քաղաքական վերնախաւը փորձեց, Հայոց Յեղասպանութիւնը երկկողմ քննարկումների դաշտ տեղափոխելով, առաջ մղել ժխտողականութեան քաղաքականութիւնը կամ անվերջ հեռանկարով յետաձգել խնդրին քաղաքական գնահատական տալու ուրուագծուող անհրաժեշտութիւնը:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- ¹ A. Davutoğlu, *Stratejik Derinlik: Türkiye'nin Uluslararası Konumu*, (Ռազմավարական խորութիւն. Թուրքիայի միջազգային դիրքը), Istanbul, Küre Yayinlari Հրատ., 2001, էջ 120:
- ² Г. Демоян, Турция и Карабахский Конфликт (Հայկ Դեմոյեան, Թուրքիան եւ դարաբաղեան հակամարտութիւնը), Երեւան, Հեղինակային Հրատ., 2006, էջ 87. նաեւ՝ *Turkish Daily News*, 17.12. 2002:
- ³ Թ. Յակոբեան, «Թուրքերն Ու Ադրբեջանցիները Եղբայրներ են, Սակայն Ռազմավարական Շահերն Աւելի Կարեւոր են», *Ազգ.* 07.01.2003, http://www.azg.am/wap/?nl=AM&id=2003010920&Base_PUB=0 :
- ⁴ Նոյն:
- ⁵ ANS TV, 25.12.2002:
- ⁶ *525ci Gazetesi*, 08.01.2003. նաեւ՝ “Brief Chronology of the Armenian-Turkish Relations, 1991-2004,” *Armenia-Turkey: Open Conversation*, published by the Center of Public Dialogue and Development, Yerevan, «Վան Արեւան» Հրատ., 2005, էջ 115:
- ⁷ RFE/RL, 09.01.2003, <http://www.rferl.org/content/article/1142831.html> :
- ⁸ Mediamax գործակալութիւն, 10.01.2003:
- ⁹ E. Danielyan, “Turkish President Congratulates Kocharian” 21.03.2003, <http://www.azatutyun.am/content/article/1571123.html> :

-
- ¹⁰ Arminfo գործակալություն, 25.03.2003:
- ¹¹ Turan news agency, 26.03.2003:
- ¹² «Հայաստան-Թուրքիա: Մեծ Բանավեճը», *Եւրոպական Կայունութեան Նախաձեռնություն* (ESI), 2009, էջ 37:
- ¹³ Վարդան Օսկանեան, «Անտեսուած Դասեր», 02.04.2012, <http://www.mediamax.am/am/column/12231/> :
- ¹⁴ Anadolu Agency, 13.12.2003:
- ¹⁵ Նոյն:
- ¹⁶ “Brief Chronology”, էջ 116:
- ¹⁷ Նոյն, էջ 117:
- ¹⁸ A. Görgülü, *Turkey-Armenia Relations: A Vicious Circle*, İstanbul, TESEV Publications, Foreign Policy Analysis, Series 8, էջ 24:
- ¹⁹ Դ. Ֆիլիպս, *Բարձրացնելով Անցեալը*, Երեւան, Մարդկային Զարգացման Միջազգային Կենտրոն, 2010, էջ 58:
- ²⁰ Նոյն, էջ 206:
- ²¹ Նոյն, էջ 210-212:
- ²² International Center for Transitional Justice (ICTJ) Report Prepared for TARC, 10.02.2003, <http://www1.american.edu/cgp/TARC/ictj.htm> :
- ²³ Ա. Անանեան, «Հայոց Ցեղասպանութիւնը Հայ-Թուրքական Երկխօսութեան Հարցի Համատեքստում»՝ *Հայոց Ցեղասպանութեան Պատմութեան Եւ Պարմագրութեան Հարցեր* , № 9, 2004, էջ 16:
- ²⁴ Görgülü, էջ 43. նաեւ՝ “Turkey and Armenia: Opening Minds, Opening Borders,” *Crisis Group Europe Report N°199*, 14 April 2009, էջ 5-6. նաեւ՝ J. S. Flanagan, J. S. Brannen, “Turkey's Shifting Dynamics: Implications for U.S.-Turkey Relations,” Center for Strategic and International Studies, June 2008, էջ 17. նաեւ՝ L. D. Phillips, *Diplomatic History: The Turkey-Armenia Protocols*, Institute for the Study of Human Rights, USA, Columbia University, 2012, էջ 21:
- ²⁵ Z. Gurcanli, “Kocharian Suggests Turkish-Armenian Intergovernmental Commission,” 27.04.2005, <http://www.turkishweekly.net/news/9053/kocharian-suggests-turkish-armenian-intergovernmental-commission.html> . նաեւ՝ N. Göksel, “Turkey and Armenia Post-Protocols: Back to Square One?,” <http://www.tesev.org.tr/assets/publications/file/TurkeyArmenia.pdf> ; Görgülü, էջ 44. նաեւ՝ *Հայ-Թուրքական Յարաբերութիւններ. Հիմնախնդիրներ Եւ Հեռանկարներ*, Երեւան, «Ոսկան Երեւանցի» Հրատ., 2011, էջ 414-415:
- ²⁶ Դ. Սաֆարեան, “Թուրքիայի Հասարակական-Քաղաքական Կարծիքը Հայ-Թուրքական Յարաբերութիւնների Կարգաւորման Հիմնախնդրի Մասին (2001-2007 թթ.),” 19.02.2015, http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=13168 :
- ²⁷ GOAM RELEASES TEXT OF KOCHARIAN-ERDOGAN LETTER, EXPLANATORY NON-PAPER, 28.004.2005, https://www.wikileaks.org/plusd/cables/05YEREVAN769_a.html :
- ²⁸ «Հայաստան-Թուրքիա: Մեծ Բանավեճը», էջ 41-42, <http://www.day.az/news/politics/97103.html> :

- ²⁹ S. Ս. Թորոսեան, «Թուրքիայի Արտաքին Քաղաքականութեան «Նոր Ակտիվիզմի» Երկրորդ Փուլը», *Լրաբեր Հասարակական Գիտությունների*, № 1-2, 2010, էջ 8:
- ³⁰ Հայոց Ցեղասպանութիւնը ճանաչած պետութիւնների եւ կազմակերպութիւնների ցանկ, <http://armeniangenocide100.org/states/>; <http://armeniangenocide100.org/organizations/> :
- ³¹ S. Özcan, “Ermeni Üst Kurulu Oluşturuldu, Başkani Devlet Bahçeli,” (Հայկական Գերագոյն Խորհուրդ է ստեղծուել, նախագահ Դեվլէթ Բահչելի), *Zaman*, 18.05.2002:
- ³² Ռ. Սաֆրաստեան, “Թուրքիայի Պայքարը Հայոց Ցեղասպանութեան Միջազգային Ճանաչման Դէմ (Ներկայ Փուլի Նոր Միտումներ),” 24.07.2008, http://www.noravank.am/arm/articles/security/detail.php?ELEMENT_ID=491 :
- ³³ Նոյն:
- ³⁴ Թուրքական վերնախաւում ձեւաւորուած պատկերացումների համաձայն, Հաագայի Միջազգային Իրաւարար Մշտական Դատարանի դատաքննութեան ընթացքը ներկայացնում էր երեքական հայ եւ թուրք դատաւորներից կազմուած ժամանակաւոր դատական ատեանի գործունէութիւն, ընդ որում, այդ ատեանի նախագահ պէտք է դառնար երրորդ կողմի ներկայացուցիչ: 1948ի ՄԱԿի Ուխտի չափանիշներին համապատասխանութեան հարցը պէտք է քննուէր երեք ուղղութիւններով: Առաջին՝ հայ եւ թուրք պատմաբաններից կազմուած խումբը պէտք է ուսումնասիրէր Թուրքիայի եւ այլ երկրների պետական, ՀՅԴ եւ Պոլսի հայոց պատրիարքարանի արխիւները եւ անէր եզրակացութիւն պահուող նիւթերի վաւերականութեան մասին: Երկրորդ՝ պէտք է ուսումնասիրուէին վիճակագրական տարբեր նիւթեր, մասնաւորապէս՝ Օսմանեան Կայսրութիւնում բնակուող հայերի, Առաջին Աշխարհամարտի տարիներին սպանուածների եւ հիւանդութիւնից մահացածների, տեղահանութեան ընթացքում մահացած հայերի թուաքանակի եւ մահուան պատճառների մասին: Այդ խումբը պէտք է ուսումնասիրէր յայտնաբերուած զանգուածային գերեզմաններում թաղուածների ազգային պատկանելութեան հարցերը: Եւ երրորդ՝ պէտք է ուսումնասիրուէր ընդհանրապէս ռազմական գործողութիւնների ընթացքը, մասնաւորաբար՝ հայկական զինուած ջոկատների գործողութիւնները: Յատուկ նշում էր, որ Թուրքիան կը դիմի Հաագայի համապատասխան դատարան, միայն երբ համոզուի, որ վերոյիշեալ հետազոտութիւնների արդիւնքները կարող են թուրքական կողմի համար լինել նպաստաւոր (Սաֆրաստեան, “Թուրքիայի Պայքարը”):
- ³⁵ Erdoğan-Prodi Görüşmesi (Էրդողան-Պրոդի մամուլի ասուլիս), 21.11.2002, <http://www.abgs.gov.tr/index.php?p=23361&l=1> :
- ³⁶ M. Elveren, Siradişi Patrik (Արտասովոր պատրիարք), 27.11.2002, <http://hurarsiv.hurriyet.com.tr/goster/haber.aspx?id=111982> :
- ³⁷ Յակոբ Չաքրեան, “Երամիութեանը Թուրքիայի Անդամակցութեանը Փորձում Է Նպաստել Պոլսոյ Հայոց Պատրիարքը,” 30.11.2002, http://www.azg.am/wap/?nl=AM&id=2002113021&Base_PUB=0 :
- ³⁸ Էլիֆ Շաֆաքի կարծիքով՝ ժամանակակից թուրք հասարակութեան մէջ առկայ է չորս մօտեցում ցեղասպանութեան ճանաչման խնդրին. ա)

- ամենատարածուածը՝ տգիտութիւն եւ հաւաքական մոռացութիւն, բ) կանխամտածուած ժխտում եւ դիմադրութիւն (այս մօտեցման ազդեցիկ կրողների ծայներն առաւել հնչել են), գ) երիտասարդների անտարբերութիւն՝ հետեւեալ մտայնութեամբ, որ իրենք պատասխանատու չեն անցեալում իրենց պապերի կատարածի կամ նոյնիսկ չկատարածի համար, դ) ճանաչման համար պայքարողներ (մտաւորականներ, իրաւապաշտպաններ, ազատամիտ մարդիկ) (L. Abrahamian, “My Journey from Hate to Hope: Talking with Turks and Armenians about the Genocide”, *Reader's Digest Magazine*, Canada Ltd, 14 September 2006, http://www.genocidewatch.org/images/Turkey-_14Sept20TalkingWithTurksAndArmeniansAboutTheGenocide.pdf) :
- ³⁹ Ա. Յովհաննիսեան, «Թուրքիայի Հանրութեան Վերաբերմունքը Հայոց Ցեղասպանութեան Ճանաչման Խնդրին», *ՎԷՄ Համահայկական Հանդէս*, 2(38) Ապրիլ-Յունիս, Երեւան, 2012, էջ 195. նաեւ՝ E. Özkoray, “Ermeni soykırımı için hâlâ tabu?” (Ինչու՞ է հայերին ցեղասպանութիւնը դեռեւս տաբու), 10.03.2010, <http://www.kuyレル.net/modules/AMS/index.php?storytopic=138&start=22> :
- ⁴⁰ E. Keskin, “We Are All Guilty!”, <http://www.armenianweekly.com/author/eren-keskin/html> :
- ⁴¹ Ռ. Զարաթօլու, «Թուրքիային Վախեցնում Է Ոչ Թէ Հայաստանը, Այլ Մեղքի Զգացումը», 24.04.2001, http://www.azg.am/wap/?nl=AM&id=2001042417&Base_PUB=0 :
- ⁴² C. Çandar, “Hrant Dink’in Öldürülmesinin Sirri...,” (Հրանտ Դինքի սպանութեան գաղտնիքը), <http://www.hurriyet.com.tr/yazarlar/14261201.asp> :
- ⁴³ “Turkey's Politicians Condemn Dink Murder,” *Turkish Daily News*, 22.01.2007, <http://www.hurriyetdailynews.com/turkeys-politicians-condemn-dink-murder.aspx?pageID=438&n=turkeys-politicians-condemn-dink-murder-2007-01-22> :
- ⁴⁴ “Dink’in Öldürülmesine Tepki Yağdı”, 19.01.2007, *Hürriyet*, <http://www.hurriyet.com.tr/dinkin-oldurulmesine-tepki-yagdi-5805903> :
- ⁴⁵ “Turks Grieve Over Journalist's Killing,” 19.01.2007, CNN, <http://edition.cnn.com/2007/WORLD/europe/01/19/turkey.dink/index.html>.

TURKISH-ARMENIAN RELATIONS IN THE TURKISH REGIONAL POLITICS
CONTEXT (NOVEMBER 2002-AUGUST 2008,
THE RUSSO-GEORGIAN FIVE-DAY WAR)
(Summary)

Grigor Arshakyan
garshakyan@mail.ru

In the November 2002 legislative elections the pro-Islamic Turkish Justice and Development party won the race and brought in significant changes to Turkey's domestic and foreign policies. Certain positive developments were observed in the Armenian-Turkish relations, which led to dissatisfaction among both the Azeri authorities and the public.

To calm Azeri concerns, Turkish authorities announced that there were no changes in Turkish foreign policy and that Ankara would never take steps against the will of the Azeri people.

In fact, it was the US government who showed great interest in the normalization of Armeno-Turkish relations. In fact, the Armenian-Turkish Reconciliation Committee was formed with the support of the US government.

In parallel, the Turkish authorities continued in their Armenian Genocide denialist policy. This policy was supported by the ruling Turkish party, the nationalist opposition in parliament, the State Security Council, and research and analytical centers which functioned in the state system.

The paper discusses basic aspects of the Armenian policy conducted by the Turkish authorities between 2002 and 2008. It touches upon the geopolitical factors and expectations of such a policy, the reasons behind the anti-Armenian Azeri stance, and the steps taken in that direction. The paper analyzes as well the most important factors for Turkish Denialism and the steps adopted to enhance this policy with fresh, new approaches.